ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/54

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2032-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 31.01.2022թ. գրության հիման վրա, 07.02.2022թ. թիվ 26/26-1/2032-2022 գրությամբ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/54 ընթացակարգի շրջանակներում 14.02.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման համար կազմակերպված ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Ղահրաման» ՍՊԸ-ին 07.01.2022թ. ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ, որին ի պատասխան մասնակցի կողմից ներկայացվել է կնքված պայմանագիրը և Պայմանագրի որոշ չափաբաժինների մասով չկնքելու (հրաժարվելու) մասին գրություն, համաձայն որի կազմակերպությունը ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում հրաժարվում է 33-րդ, 37-րդ, 38-րդ և 46-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի բ պարբերությունը՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, որոշել է մերժել տվյալ մասնակցի՝ նշված չափաբաժինների մասով հայտը(...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/54 ընթացակարգի շրջանակներում 14.02.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2022/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 31-րդ, 33-38-րդ, 40-րդ, 42-րդ և 46-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. «Ղահրաման» ՍՊԸ-ն, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին ուղղված 21.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ղահրաման» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մամե Հասանյանի հայտնում է, որ «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվում է 33, 37, 38, 46 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հրաժարվել է 33-րդ, 37-րդ, 38-րդ և 46-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ի հայտը՝ տվյալ չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2032-2022 գրությունը, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 31.01.2022թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 31-րդ, 33-38-րդ, 40-րդ, 42-րդ և 46-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին ուղղված 21.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ղահրաման» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մամե Հասանյանի հայտնում է, որ «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվում է 33, 37, 38, 46 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հրաժարվել է 33-րդ, 37-րդ, 38-րդ և 46-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ի հայտը՝ տվյալ չափաբաժինների մասով մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին 21.01.2022թ. ուղղված գրությամբ հրաժարվել է 33-րդ, 37-րդ, 38-րդ և 46-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2022թ. թիվ 26/26-1/2032-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**